

ՀՏԴ 82.09 (479.243)

Գրականագիտույթուն

## ԱՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏԸ ԼԵՆԱ ԳՐԴԱՐՅԱՆ

**Բանալի բառեր** - բանաստեղծ, մանկավարժ, Շուշի, Մոսկվա, հեղափոխություն, ժողովուրդ, Ստեփանակերտ, լավագություն, ամսագիր, Ստալին, բռնապնտություն, զնի

**Ключевые слова:** поэт, педагог, Шуша, Москва, революция, народ, Степанакерт, оптимизм, журнал, Сталин, режим, жертва

**Keywords:** poet, teacher, Shusha, Moscow, revolution, people, Stepanakert, optimism, magazine, Stalin's regime, the victim

### Լ. Գրիգորյան Предвестник арцахского литературного очага

Статья посвящена талантливому арцахскому поэту, педагогу и общественному деятелю Григору Нерсисяну (1887-1937). Благодаря его усилиям в Шуше возродилась угасшая арцахская литературная жизнь.

В 1929 году он стал основателем журнала "Искра" в Степанакерте, а в 1934 году он был назначен ответственным секретарем союза писателей.

В статье также говорится о пройденном пути поэта, о его литературном наследии, большая часть которых и сейчас имеет большую ценность. Г.Нерсисян стал невинной жертвой сталинского режима.

### L. Grigoryan Harbinger of Artsakh Literary Life.

The article is devoted to the talented Artsakh poet, teacher and public figure Grigor Nersisyan (1887-1937). Thanks to his efforts the extinct Artsakh literary life revived in Shusha.

In 1929, he became the founder of the journal "Iskra" in Stepanakert, in 1934, he was appointed executive secretary of the Writers' Union.

The article also says about the past of the poet, his literary heritage, much of which now has great value. G.Nersisyan became an innocent victim of the Stalin's regime.

Հոդվածը նվիրված է արցախցի տաղանդավոր բանաստեղծ, մանկավարժ ու հասարակական գործիչ Գրիգոր Ներսիսյանին (1887-1937), ում ջանքների շնորհիվ վերակենդանացել է 1920թ. Շուշիի ավերումից հետո մարած Արցախում գրական կյանքը: 1929թ. նա Ստեփանակերտում հիմնադրել է «Կայծ» ամսագիրը, 1934-ին նշանակվել գրողների միության Արցախի բաժանմունքի պատասխանատու քարտուղարը:

Հոդվածում միաժամանակ խոսք է գնում բանաստեղծի անցած ուղու և գրական ժառանգության մասին, որի մեծ մասը այսօր էլ չի կորցրել իր արժենքը:

Գ. Ներսիսյանը ստալինյան բռնապնտության անմեղ զոհներից է:

Շուշի քաղաքը, ինչպես գիտենք, մինչև 1920թ. գարունը հայ մշակույթի ամենանշանավոր կենտրոններից մեկն էր և իր նշանակությամբ կովկասում զիջում էր միայն Թիֆլիսին ու Բաքվին: Օսմանյան ու մուսաֆաթական թուրք բարբարուների կողմից նրա ավերումով, բանաստեղծ Հրաչյա Բենգլարյանի բարեկրով ասած՝ Արցախում գրական առողջությունը (և ոչ միայն) զամաքնչին: Այդ երաշտը ձգվեց մինչև այն պահը, երբ օտար ավերից, հայրենի եզրերի սերը սրտում՝ տուն դարձավ արդեն անուն հանած բանաստեղծ, մանկավարժ և հասարակական գործիչ Գրիգոր Ներսիսյանը, ով «նշանակալի հետք է թողնել անցյալ դարի 20-30-ական թվականների հայ պոեզիայում»<sup>1</sup> և ում, իրավամբ, պետք է համարեն Արցախի արդի գրական ընտանիքի նախակարապետը:

Գրիգոր Միրզայի Ներսիսյանը ծնվել է 1887թ., Շուշի քաղաքում: Ավարտելով տեղի թեմական դպրոցը, զբաղվել է ուսուցչությամբ: 1915թ. ընդունվել է Մոսկվայի առևտուրի հիմնադրություն, սակայն նյութական սույն պայմանների պատճառով ուսումը կիսատ է թողնել: Իր շատ սերնդակիցների նման տարբեկով հեղափոխական հովերով՝ տեղափոխվել է Պետրոգրադ (Ս. Պետերբուրգ), ուր միաժամա-

<sup>1</sup> Կայ նոր գրականության պատմություն, հ. 5, Ե., 1979թ., էջ 971-972

նակ ծառայել է տեղի զինվորական կայազորում: 1917թ. փոխադրվել է Ալեքսանդրապոլ (Գյումրի), 1919-ին՝ Աբսագիա, նաև գրադպել ուսուցությամբ, ապա աշխատել Սուխում քաղաքի տարբեր հիմնարկություններում: 1923թ., վերադառնալով Արցախ, մինչև կյանքի վերջը (1937թ.) հայոց լեզու ու գրականություն է դասավանդել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում:

Գրիգոր Ներսիսյանի առաջին ստեղծագործությունները տպագրվել են արցախյան մամուլում, մասնավորապես՝ Շուշիում հրատարակվող «Ղարաբաղ» թերթում, որի խմբագիրն էր անվանի գրող Վլաթանես Փափազյանը: Հայրենի քաղաքում են լույս տեսել նաև բանաստեղծի առաջին գրքույկները՝ «Թախծոտ էջեր» (1911թ., տպարան Բ. Տեր-Սահակյանի) և «Խորտակված հույսեր» (1912թ., տպ. Մ. Քարաջանյանի), որոնց էջերում, ինչպես և խորագրենք են հուշում, գնրիշլուսում էր անորոշ երազանքի, անհեռանկար որոնումների մոտիվը: Եվ դա պատահական չէր: Հայտնի է, որ 1900-1910-ական թվականներին հայրենիքի թեման, ավելի ստույգ՝ հայրենիքի փրկության ուղիների որոնումը հիմնական տեղ էր զբաղեցնում՝ դառնալով հայ բանաստեղծության զլասալոր մտահոգությունը, ինչը և առնչված էր Արևմտահայաստանում թուրք ոճրամոլ իշխանությունների օրենոր սաստկացող հակահայ քաղաքանության հետ: Հիշենք Վահան Տերյանի և Եղիշե Զարենցի վաղ շրջանի ստեղծագործությունները: Իր ժամանակակիցների նման Գրիգոր Ներսիսյանին նույնպես խորապես հուզում էր երկատված հայրենիքի ճակատագիրը, նրա մոռյալ ներկան ու մշուշոտ ապագան, որոնք և թալսծոտ երգներ էին ծնունդում բանաստեղծի զգայուն հոգում:

...Ու շաշում է ձմռան քամին,  
Սուլում հանդարտ ու վայում,  
Եվ լալիս է իմ հենգ հոգին  
Տանջանք, պատրանք աշխարհում...

Մռայլ կյանքի անհոյս, անլոյս  
Մութ ճամփերում ես ընկած,  
Ալս, ինձ համար վառ արշալոյս  
Հնչ երկնքում չի ծագած...<sup>1</sup>

Բանաստեղծի հոգին պարուրած թախիծը թենի երկար ժամանակ չէր լրում նրան, սակայն հետզետեւ ոչ միայն «մեղմանում», այլև «փոթորկուն երազների» է փոխարկվում, հուսուն դողանջներ արթնացնում, ի վերջո, հեղինակի անհանգիստ սիրտը «հողմի մրբիկ» է տենչում: Ըստ նրա՝ միայն վերահաս հզոր տարերը, այսինքն՝ համաշխարհային հեղափոխությունը կարող էր վերափոխել ամեն ինչ, հետևապես և ազատություն բների իր ժողովրդի բոլոր հատվածներին: Այս համոզմունքն է իշխում, օրինակ, «Նոր այգ», «Անցել եմ կյանքի», «Ան տարիների խենթ որոնումի» և մի շարք այլ գործերում, որը հեղինակը շնորհում է ավետարեն փոթորկի մոտալուտ զալուստը:

Այդ համոզմունքը հավատ, իսկական, կարծրացած հավատ է դառնում արդեն ուսական հեղափոխության օրաններում, որտեղ բանաստեղծը ականատես է դառնում աննախադեմ իրադարձությունների.

Ես հավատում եմ, կզա մի նոր ժամ,  
Նոր օր՝ նոր կյանքի տենչերով առատ.  
Նոր սարսուների, նոր ապրումների  
Երգս կինչի ուժեղ ու անպարտ...<sup>2</sup>

Ինչպես հեղափոխությամբ ոգևորված մտավորականների ողջ սերունդը, այնպես էլ Գրիգոր Ներսիսյանը հստակ պատկերացում չուներ, թե ինչ է տալու այդ հեղափոխություն հորջորջանքը Ռուսաստանի ժողովրդներին ըսդհանրապես ու հայ ժողովրդին մասնավորապես, էլ չենք խոսում Ենիշերական Թուրքիայի լծի տակ տառապող արևմտահայության մասին, որի զլասին շատ շուտով պիտի իշներ մահաքն յաթաղանք: Սիսակ ինչու Զարենցի և ժամանակի մյուս Երևանիների նման նա զնծությամբ ընդունեց 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունը, այն դիտելով իբրև կործանման եզրին հայտնված

<sup>1</sup> Տես՝ Հ. Գրիգորյան, Արցակվի գրական բնուանիքը, Ե., 2004թ., էջ 11

<sup>2</sup> Գ. Ներսիսյան, Վերջին երգից առաջ, Ստ., 2013թ., էջ 33

մայր ժողովրդի փրկության ճանապարհ, իրար հետևից նրկնելով իր «Հռկտեմբերյան նրգերը», «Քսան և վեցը», մյուս «Փոթորկաշունչ» գործերը, որոնք, սակայն, անուժ գտնվեցին փրկելու «ժողովրդի թշնամի» պիտակը կրող բանաստեղծի կյանքը, ինչպես իր հանճարեղ զքչերորդ չկարողացավ փրկել չարենցյան «լենինիանան» ստալինյան արյունոտ մագիներից...»

Տևական բացակայությունից հետո զալով հայրենիք, Գրիգոր Ներսիսյանը գրական-հասարակական բուռն գործունեություն է ծավալում, առանց չափազանցության՝ իրեն նվիրելով նրկամասի կիսամեջյալ կետում գտնվող մշակութային կյանքի վերածնդին: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա զյուղելիսնիկումը փաստորեն մի գրական-մշակույթի օջախի էր վերածել, որտեղ պարբերաբար կազմակերպում էր զանգվածային միջոցառումներ՝ դասախոսություններ, գրքերի քննարկումներ, գրական դասեր, բանավեճեր, որոնց ակտիվությունը մասնակցում էին ոչ միայն ուսանողներն ու ուսուցիչները, այլև բարի բուն իմաստով՝ բաղադրի ողջ մտավորականությունը: Պատահական չե, որ տելինիկումի շատ շրջանավարտներ հետագայում իրենց կրթությունը շարունակեցին բանասիրական ֆակուլտետներում: Օրինակ՝ գրող ու գրականագետ Գուրգեն Հովհաննը, ով նրկար տարիներ դեկադարել է ՀԳԱ Մ. Աքենյանի անվան գրականության ինստիտուտը:

Բանաստեղծը մշտական հոգածություն էր տածում գրական հակումներ ունեցող նրիտասարդների նկատմամբ: Նրա անմիջական միջամտությամբ «Խորհրդային Ղարաբաղ» և Բարքում հրատարակվող «Կոմունիստ» թերթերը, նրենմ առանձին էջերով սկսնցին տպագրել արցախցի սկսնակ հեղինակների թողարկանքները՝ Արշավիր Գրիգորյան, Իսրայել Պետրոսյան(Իսպետ), Դանիել Ավագյան, Անդրանիկ Խորենց, Ասատոր Պետրոսյան, Ռուբեն Հայրապետյան, Աշոտ Ուլութաբյան, Արտոն Հրվենց և էլի ուրիշներ, որոնք ոչ առանց հապատության իրենց Ներսիսյանի սաներ էին անվանում: Ցավոր, նրանցից միայն ապագա առակագիր Իսպետին էր վիճակված զենքը գրչով փոխարինելու, մյուսները տուն չդարձան Մեծ հայրենականից:

Եվ այսպես՝ օր օրի ձևավորվում է արցախյան գրական միջավայրը: «Լարձես արթնացն էին Արցախում քուն մտած մուսաները», - գրում է բանաստեղծ Բոգդան Զանյանը, հավելելով, որ այդ մուսաներին արթնացնողը Ներսիսյանն էր, - «մարզի միակ ճշմարիտ բանաստեղծը, գրական մարզը: Բայց նրա ստեղծած գրական աշխարհը այնքան զգալի ու նկատելի էր, որ թվում էր, թե այստեղ գործունեություն է ծավալել մի ամբողջ գրական կազմակերպություն»<sup>1</sup>:

Գրիգոր Ներսիսյանի նշանակալի ձեռնարկումներից մեկն էլ «Լայծ» գրական-գեղարվեստական, քննադատական և զյուղատնտեսական հանդեսի հիմնադրումն էր, որի առաջին ու միակ համարը լույս տեսավ 1929թ. հուլիսին՝ Արցախի գրողների ընկերակցության և «Խորհրդային Ղարաբաղ» թերթի հրատարակությամբ: Այս թերթի հաղորդմամբ՝ շարված-պատրաստ էր նաև նրկորդ համարը, բայց ինչ-ինչ պատճառով լույս չընծայվեց: Ամենայն հավանականությամբ՝ ադրբենջանական իշխանությունների արգելով: Անկարևոր չե նշել, որ նույն բախտին է արժանացնել նաև 1934թ. հիմնված «Գրոհ» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիրը: «Արցախի անօրեն տենրերը կոշտ-քարերով էին շրջապատել մեր գրական օջախը, չեին ուզում, որ այն բոցներն դառնա, - վերիիշում է Զանյանը, ով ժամանակին ցմրուր ըմպել էր «ներքայրական» հանրապետության «օրինապահների» հայակուլ քաղաքականության բաժակը: - Նրանք ուզում էին Արցախը հայաթափել, իսկ գրողները կարող էին խանգարել, քանզի հայություն, հայապահպանություն կրարողներին»:<sup>2</sup>

Ըստնրցողների համար Գրիգոր Ներսիսյանն իրոք որ սիրված, փնտրված հենդինակ էր, և նրա հանդեպ տածվող սերը ըստ ականատեսների՝ գրեթե պաշտամունքի էր հասնում՝ շնորհիվ 1928թ. Ստեփանակերտում հրատարակված «Բանաստեղծություններ» ու «Պոեմներ» ժողովածուների: Վերջինս ընդգրկում էր բանաստեղծի տարրեր տարիների գրած 9 երկ, այդ թվում՝ «Հազար դար հետո», «Դժոյս», «Լողորդի մահը», «Լիդա» (դրամատիկական պոեմ), «Վերադարձ» (Ավ. Իսահակյանի «Աբու-լալա Մահարի»-ի պարոդիա), «Գրբաց Բղդո» (արևելյան հերիալ. 1931-ին առանձին գրքով լույս է տեսել Երևանում), որոնք առկաս իրենց թնմատիկայից ու արծարծած զադափարից, շատ բան են ասում հեղինակի շռայլ տաղանդի մասին:

<sup>1</sup> Բ. Զանյան, Անցած ճանապարհի հուշապատկեր, Ստ., 2009թ., էջ 15

<sup>2</sup> Նույն տեղում

Ներսիսյանի բանաստեղծություններից, գոնե այսօրվա լնաթերզողներիս համար առանձին ուշադրության է արժանի ավելակված Շուշիին ձռնված շարքը: Օտար ափերից վերադառնալով երբեմնի ծաղկուն, բայց արդեն փլատակված, դիակված հայրենի քաղաք՝ նա խոր, անամոք կակիծ է ապրում.

Ամենուրենք մահասարսութ, մոխրամշուշ դամբարան,

Ասես Էլի քարերի տակ հազարավոր մարդիկ կան՝

Սարսափահար ու շնչահար սպասելիս իմ այցին.

Ամենուրենք անհիշատակ, եղինջածածկ գերեզման...<sup>1</sup>

(«Ավերակներում»)

Գերզգայուն բանաստեղծը, որ սահմունացուիշ տեսարաններից ցնցված՝ թվում է՝ պիտի հուսահատվեր, հիասթափվեր, կարողանում է ուժ գտնել իր մեջ, հավատալով չար ուժերի կործանմանը.

Օ~, մի քնքուշ հավատ է, որ հուզում է ինձ այս պահին,

Որ ենտրեն այդ դժուկի անվերադարձ պիտ կորչեն:<sup>2</sup>

(«Ճամփի վրա»)

Նա չէ՞ր գուշակում, արդյոք, որ երբեւ կգա 1988-ը... Մի բան, սակայն պարզ ու հաստատ է՝ հայրենասեր բանաստեղծը լուսավոր հայացրով եր նայում իր օրբան քաղաքի, ասել է թե՝ Արցախ հայաշխարիի վաղվան.

Ընկերական աշխատանքի դյուցազնական պողովումով

Փլկածքներում մի նոր քաղաք հսկայական պիտ կերտովի,

Անապատված այս վայրերն ել ծաղկոցների պիտ փոխվեն...<sup>3</sup>

(«Նստարանը»)

Միով բանիվ՝ այդ լավատեսական ներշնչանքն եր ուղեկցում Ներսիսյան մտավորականին իր հայրենանանվեր գործունեության մեջ, որը բնավ չէր սահմանափակվում վերոնշյալ ոլորտներով միայն: Նա հաճախ եր տարբեր ժանրի հրապարակումներով հանդես գալիս մամուլի էջերում ոչ միայն գրական-մշակութային, այլև հասարակական կյանքին առնչվող տարբեր հարցերի շուրջ, օգնության ձեռք մեկնում ուսուցիչներին, մշակութային օջախներին: 1934թ. Ստեփանակերտի պետական թատրոնը բնմադրում է «Զախարաված ժանիքներ» դրաման, որի հենդինակներից մեկը Ներսիսյանն եր: Նույն տարում բանաստեղծն ընդունվում է ԽՍՀՄ գրողների միության մեջ և նշանակվում ԳՄ Արցախի բաժանմունքի պատասխանատու քարտուղար, ինչը և նոր թափ, նոր բովանդակություն է հաղորդում նրա ձեռնարկումներին: Ավաղ, երկար չունեց այդ ամենը: Նրա հայրենասիրական նկրտումները, օրավոր առող հենդինակությունը չին կարող զերծ մնալ փոքրողի, ճնշիմ, նախանձառրդու մարդուկների, Գ. Նժդեհի կասեր՝ «իրենց ցեղի կաթով շմեծացած, վատասերած հայերի» չարակամ ուշադրությունից, որոնք՝ իր երեկով ստրկահած մտերիմներն ու գործընկերները, վաղուց եին ժանիք սրում, սրտատրով սպասում հարմար պահի, Բաքվի հրահանգին: Եվ այդ պահը չուշացավ, չէ՞ որ օրացույցին 1937-ն եր... Դժբախտաբար, սոցունալիզմի և կեղծ ինտերնացիոնալիզմի զատագովների հեղացած այդ քիրվայական ամոթալի երևույթը հետագայում էլ շարունակվեց, ընդհուպ մինչև 1988-ը...Գործելառը նույնն եր, թիրախներն էին փոխվել:

Վերջակետից առաջ կկամենայինք ուրախությամբ հավելել, որ վերջերս Ստեփանակերտում հրատարակվեց Գրիգոր Ներսիսյանի ստեղծագործությունների նոր ժողովածուն՝ «Վերջին երգից առաջ» խորագրով, որն ամփոփում է վերոհիշյալ պոեմներն ու երենք տասնյակ բանաստեղծություններ: Այն կազմել է Բակուր կարապետյանը, խմբագիրն ու առաջարանի հենդինակն է Վարդան Հակոբյանը:

### Գրականություն

1. Գրիգորյան Հ. «Արցախի գրական ընտանիքը» Երևան, 2004թ.
2. «Հայ նոր գրականության պատմություն», հ.5, Երևան-1979թ.

<sup>1</sup> Խորհրդային Ղարաբաղ, 24. 07. 1926թ.

<sup>2</sup> Խորհրդային Ղարաբաղ, 21. 08. 1926թ.

<sup>3</sup> Խորհրդային Ղարաբաղ, 09.08.1926թ.

3. Ներսիսյան Գ., «Վերջին երգից առաջ», Ստեփանակերտ, 2013թ.
4. Զանյան «Անցած ճանապարհի հուշապատկերը», Ստեփանակերտ, 2009թ.
5. «Խորհրդային Ղարաբաղ», 1926թ. 24.07
6. «Խորհրդային Ղարաբաղ», 1926թ. 21.08
7. «Խորհրդային Ղարաբաղ», 1926թ. 9/08

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Լևոն Գրիգորյան** – ք.գ.թ., պրոֆեսոր, հայ գրականության և լրագրության ամբիոն  
E-mail: lenagrigoryan64@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ս. Խանյանը: